Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

385
W-88

12055

2010

385
Ա-88

ԽՆԴԻՐ

ԵՐԿԱԹԼԷ ԱՐՆԵՑՊԱՐՏԻ ՎԵՐԱՅ

ԴԷՊ Ի ՀԵՂԿԱՍՏԱՆ.

Հրկ. Արքեպսկոպոսի Երեվան

ՏՓԽԻՍ.
Ի Տպարանի Դիտարար Դատարար. Փոխարքայի Կովկասու.
1872.

13351

2004

385* (54)
84-88

ԽՆԴԻՐ

ԵՐԿԱԹԷ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎԵՐԱՑ ԴԷՊ Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ *).

ՄՈՍԿՎԱՆ-ՀԱՅԵՐԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

33987

Հնդկաստան մտած Եւրոպացոց միջին, միայն Անգլիացիքն աւելի լաւ իմացան ամէն օգուտն մենավաճառ տիրողութեան նորա բոլոր առևտուրին և ձեռն տուին այս գործին հանճարաբար և անդադար:

Արևելեան և Հիւսիսային սահմանեբիցն Հնդկաստանի չէին երևում նոցա համար ոչինչ նախանձընդդիմութիւնք; Խարի—Յուսոյ սարաւանդի ճանապարհն և ծովերի տիրապետութիւնն ապահովացած էին նոցա համար ահագին նաւատորմիղով; մնում էր միայն քանդել, ջնջել յաւիտենական, բնական ճանապարհներն Հնդկաստանի, նորա Արևմտեան սահմանիցն, որ իսպառ փակել այն հարուստ երկիրն իւր հարիւրաւոր միլիոն ժողովուրդովն ամենայն օտար մերձենալուց և տեսողութենից, և այնուհետև ազատաբար գործ դնել իւրեանց տնտեսութիւնն:

*) Յօդուածս այս Ռուսերէն կարդացաւ 28-ին Ապրելի 1872 ամի 'ի Նատի Կովկազի Բաժինի Ռուսվոյ Տէրնիկական ժողովոյն.

Զեռնարկութիւնն հեշտ չէր, բայց հաստատութիւնն դիտաւորութեան, հնարագիտութիւնն միջոցաց, գործունէութիւնն և հոկողութիւնն Անգլեացոց հասցրին նպատակին.— Ամօրէն Աֆղանստանի և Բէլուջիստանի երկիրներումն ճարտարութեամբ սերմանեցին և փողով աճեցուցին մշտական կռիւներ և արիւնահեղութիւնք, որ թռչունը չկարենար անցկենալ այն երկիրներով 'ի Հնդկաստան; Պարսկաստանին տուին Բաբէհամէն խորհուրդներ — նստել հանդարտ իւր շրջանակի մէջն; չմոռանալ երբէք, որ իւր քամակիցն կանգնած են Ռուսսիայն և Թուրքիայն, միշտ պատրաստ պատառոտել նրան, եթէ չքաշուէին Անգլեացոց պաշտպանութենէն; հրաժարել վաղեմի սովորութենէն պատերազմական արշաւանք առնել դէպի Աֆղանստան և Հնդկաստան; չխառնել այն երկիրներումն սահմանած գործոց կարգադրութիւն; նաև կտրել նրանց հետ անօգուտ քարվանական յարակցութիւնք, քանզի Բէնդեր-Բուշիրի վաճառական տունն Հնդկաստանի Ընկերութեանն պարտաւորեալ է տալ Պարսկաստանին առատութեամբ ամենայն բերք Հնդկաստանի աւելի էժան գնով, քան թէ Պարսիկք իրանք կ'կարողանան ստանալ այնտեղից ուղղակի չորային ճանապարհով:

Պազմելով այսպէս անանցանելի շրջապարիսպ Արևմտեան կողմիցն Հնդկաստանի, Ընկերութիւնն սկսաւ պարապիլ իւր ներսին տնտեսութեամբն.— տասնեակ հաղարաւոր Անգլեացոց զինուորք բաւական էին ահուդողի մէջ պահել հարիւրաւոր միլիոն դառն աշխատողներին, որք ճակատի քրտնքով հացիւ ճարումէին օրական ապրուստն, այն իւրեանց թանգագին բերքերիցն, որ ոչ մի տեղ և ոչ ոքի վերայ կարողանում չէին ծախել բաց 'ի Անգլեացոց գործակալաց վերայ; հարստութեանն հաշիւ չկար, զօրութիւնն աճեց կարմանալի չափով, բայց ոչ հարստութիւնն և ոչ ուժն չկարողացան թմրեցնել Անգլիայն փափկութեան և անգործութեան մէջ, ըստ օրինակի անկեալ իշխանութեանց; ընդ հակառակն, նորա շահագէտ ոգին կրկնապատկեց իւր գործունէութիւնն, օգուտ հանելոյ համար ամէն բանից և ամէն ոլգաց; ընդ նմին նա անքուն աչօք պահպան էր կանգնած իւր ճանապարհների և իւր Հնդկաստանի հարստութեան աղբիւրների վերայ:

Սակայն այսպիսի իրաց տակն դրած էր

անցաւոր և անհաստատ հիմք, քանզի նա էր արուեստական, հակառակ էր անփոփոխ օրինացն բնութեան.—անկարելի էր որ հարիւրաւոր միլիոն բնակիչք Հնդկաստանի մնային միշտ տանեակ հազար Անգլիացոց զինուորաց լծի տակն և, կեղծեօք հնարեալ սահմանաց վերայ դժուարութեանց պատճառով, զբկեալ լինէին ազատ տիրութենէն իւրեանց բերքերի և չ'տալ նոցա դարաւոր, ուղղակի և բնական ընթացք առ մերձաւոր Ասիայի դրացիս իւրեանց և նրանց ձեռքով հասցնել հեռաւոր Արևմուտին։

Յարաբերութիւնքն Եւրոպայի և Հնդկաստանի մէջ,—այն երկիրների մէջ, որք զերազանցուած են իւրեանց բերքերով և գործածութեամբ, ոչ կարէին շարունակուիլ յատկապէս Անգլիայի օգուտի համար երկար ճանապարհով Բարի—Յուսոյ սարաւանդի։ Եւրոպայն և Հնդկաստան ձկտումէին միշտ և ձկտումն, որ իրանց մէջն ուղիղ և աւելի կարճ ճանապարհագիծ դնուի։

Հիմնուելով այս ճշմարտութեան վերայ Բոնապարտէն համարձակեց իջանել զօրօք յԵգիպտոս, որ՝ մօտաւոր ճանապարհ բացանի դէպ 'ի Հնդկաստան, բայց նորա դիտաւորութիւնքն խափանեցան հսկայական դիմամարտութեամբ Անգլիացոց; նոյնպէս զուր անցկացան նորա ջանքն Պարսկաստանումն, մեծասպաս ճանապարհորդութեամբ Մալկոլմ դեսպանին Անգլիացոց, որ լցրուց ոսկւով այն երկիրն, մին ծայրից մինչև միւս ծայրն, Պարսկաց զարմացնելոյ համար, թէ որքան մեծ է և զօրեղ է աստիճանն Անգլիայի և որքան ընչին են հակառակորդք նորա։

Բայց ամենն չ'էր վերջացած.

Մին տասն և հինգ ամաց յետ Ֆրանսացին Գամբա առաջարկեց գեներալ Երմոլովին իւր միտքն վասն պրոնջիթ, անցողական վաճառականութեան Եւրոպայից 'ի Պարսկաստան, Թիֆլիսի ճանապարհաւն։ Անգլիացոց սրամտութիւնն խելոյն նկատեց այդ մտքի վտանգն; բայց Երմոլովն այնպէս շուտով տարաւ գործն, որ Անգլիացոց դեսպանադիտութեանն հնար չ'մնաց արգելելոյ նորա։

Այս տրանսիտն, սկսուած 1821 թուին, կարաց մինչ 'ի 1825 տարին փոխադրել Պարսկաստանի վաճառականութեան կենդրոնն Հարաւիցն 'ի Հիւսիս—Բուշիրիցն 'ի Թաւրիզ և լցրուց ապրանքներով բոլոր բազարներն դէպ 'ի Տրիբմանշահ, Շիրազ և Հերաթ ճանա-

պարհաց վերայ, շտապելով գնալ լայնաբար, աւելի հեռու, ընդ ամենայն կողմունս:

Հաստատութիւնն, մեծութիւնն և արագութիւնն գործողութեանց տրանզիտի, որք ձգտվումէին կատարելապէս փոխել Եւրոպայի և Ասիայի մէջն եղեալ առևտուրի կարգն, ցոյց են տալիս թէ մինչև որ աստիճան ցանկալի է հետաքննել գործոց ուղղակի պատճառներն; նորան ձեռնտու եղած պարագայքներն և այն անձանց միտքերն, որք այն ժամանակ առիթ ունէին խօսելոյ յ'օգուտ կամ ընդդէմ տրանզիտին:

Այսպիսի հանգամանքներն, անցեալ ժամանակին և ըստ շատ կշռադատութեանց, կարէին համարուիլ անպարկեշտութիւն, բայց այժմ, որ գրէթէ կէս դար անց է կացել նոքա կ'պատկանին պատմութեան գաւառին; իսկ այնու ամենայնիւ կենդանի օգուտ կ'ներկայացնեն Ռուսսիայի համար, քանզի գործողութիւնն եղել է Ռուսսիայի հողումն—Ենդրկովկասումն և անշուշտ պարտի վերանորոգուիլ այնտեղ կրկին, մօտիկ ապագայ ժամանակում:

Թիֆլիսում եղած Ֆրանսայի կօնսուլ աստեղ Գամբա ասաց 1827 թուին, որ սկզբնական միտք նորա Եւրոպական առևտուրին

ճանապարհ բաց անելոյ համար Թիֆլիսի վերայ 'ի Պարսկաստան և յայնկոյս.—„Իմ հաւատալն, վասն յաջողութեան Եւրոպական առևտուրին հեռաւոր Արևելքի հետն Ենդրկովկասի և Պարսկաստանի ճանապարհով, հիմնուածէր ոչ թէ Ֆրանսայեցոյ թեթևամտութեան վերայ, այլ ճշմարիտ տեղեկութեանց վերայ; հարկաւոր է միայն նայել երկրագնտի աշխարհացուցին.—Ուղղակի գիծն, քաշած Եւրոպայի կենդրոնից—Պարիզից դէպ 'ի կենդրոնն Հնդկաստանի—Կալկուտթայն, ընկնում է Ենդրկովկասի վերայ: Ինուտթեան օրէնքներն անփոփոխելի են,—ուղղակի գիծն երկուց կետից մէջ է ամենակարճն,—և վաճառական ճանապարհն ընդ մէջ Եւրոպայի և Հնդկաստանի, բերքերի և գործածութեան երկրների մէջն, պիտի գնալ անպատճառ, վաղ կամ ուշ, այդ ուղղակի գծովն: Յիրաւի մեր Եւրոպացի վաճառականներն չէին սիրտ անել 'ի սկզբանէ մտանել այս անծանօթ երկիրներս, բայց տեղերումն իսկ գտանվում են գերազանց ճանապարհ բաց առնողներ—Հայեր. Ռուսսիայն առաջ ևս բանեցրուց նրանց այդ գործոյ համար, որպէս ցուցանումէ իշխանութիւն ունեցող այս մասին դատաւոր Ռէյնալի*) միտքն.—

*) Raynal, Histoire philosophique et palitique.

„Ազգ գործունեայ, գիտացող Արևելից սովո-
„րութիւնքն, տիրող մեծամեծ գումարաց, ապ-
„րող չափաւոր տնտեսութեամբ, ունեցող շատ
„հին ժամանակներից կապակցութիւնք, հետա-
„մուտ մանրաման հանգամանաց, բարձրանող
„մինչև ց՝ընդարձակ գնոութիւնս; այսպիսի ազգն
„կարելի չ՝էր փոխանորդել:“ Ներգործութիւնն
գերազանցեց իմ բոլոր ակնկալութիւնքին.— իմ
խորհուրդս տրանզիտի մասին հեշտութեամբ
ընդունեց Երմօլովն, Կայսրն շուտով հաստա-
տեց և Այսրն ոչ մի օր չ՝կորցրին ձեռն արկա-
նելոյ գործոյն, որ գնումէ սքանչելապէս, ոչ
ոք չ՝է կարող ուրանալ այս, բայց...ապաբաղ-
դութեամբ գործն պիտի կանգնի....!„

Տրանզիտի գլուխ գալն հարկադրեց Անգ-
լեացոց կտրական և շտապով հնարք գործ
դնել, որ յառաջ, տրանզիտի ընթացքն կտրել
և յետոյ ջանք անել արմատին հանել նորա:
Մի կողմից փառասիրութեանն Բբաս-
Միրզայի, որ կառավարիչ էր Պարսկաստանի,
պատճառաւ ծերութեան հօրն իւրոյ Ֆաթհ-
Ալի-Շահին, Անգլեացիքն առաջ արկին ժպ-
տող հեռացոյցն օգտի և փառաց—յետ դար-
ձնել Պարսկաստանին մօտիկ ժամանակի նրան
պատկանեալ Մուսուլմանաց նահանգներ և

Վրաստանի փոխարքայութիւնն Անդրկովկա-
զումն, խոստանալով, 'ի հարկէ, նորա համար
նիւթական օգնութիւնս; միւս կողմից Անգլե-
ացոց գործակալներն կարացին գրաւել գաղէթ-
ների մէջ հրատարակողներին և հռչակողնե-
րին ամենայն վաճառական և գործարանա-
կան կենտրոններում Ռուսսիոյ, նախագուշակե-
լով Ռուսսաց գործարանների համար վերջին
աւերումն, որովհետև Եւրոպացոց ապրանք-
ներն մտնելով Պարսկաստանի մէջն Թիֆլիսի
ճանապարհաւ, նոքա միաս կը տան, կը ոչն-
ջացնեն այն տեղ Ռուսսաց ապրանքների ու-
զելն:

Յարձակումն Պարսից 1826 թուին 'ի
վերայ Անդրկովկազին, ողբալի եղք ունեցաւ,
ինչպէս թուի թէ նախատեսեալ էին ին-
քեանք Անգլիացիք; բայց նոցա դիտաւորու-
թիւն հասաւ առաջադրեալ նպատակին:—
պատերազմն դադարեցուց տրանզիտն և հասա-
րակական Ռուսսաց առևտուրն Պարսից հետ,
աւելի քան զերկու տարի: Նախագուշա-
կութիւնն Անգլեացոց գործակալաց ճշմարտու-
եց Ռուսսաց թեթևահաւատ վաճառականաց
և գործատերանց աչքերումն, և նոքա առև-
տրի դադարելոյ պատճառն դնելով ո՛չ պատ-

բազմի վերայ, այլ այլանդակ տրանզիտի վերայ և նրանից կերպարանելով մին հարցմունք կենաց և մահու կարողացան, իւրեանց համար վնասաբեր խնդրքով, տրանզիտն խախտել հիմքիցն, 1826 ամի վերջին:

Ընդունէր միայն սպասել որ տրանզիտին տուած տասնամեայ ժամանակն անցանի առ 1831 թիւն; բայց որովհետև այդ սպասելոյ ժամանակին Ռուսսիայն կարողէր-իւր միտքն փոխել և Անգլիացոց առաջևն կայր դեռ ևս բաւական կասկածանք վասն վերջին վճռական խափանելոյ տրանզիտին, ապա ուրեմն նոքա ժրաջան շարունակուէին իւրեանց քարոզներն ամէն Ռուսսաց, ընդդէմ տրանզիտին.—

Անգլիացոց դեսպանն 'ի Պարսկաստանի Մակդոնալդ ասէր ինձ 1829 թուին.—

"Ռուք ծանօթութիւն էք ժողովում մեր վաճառականութեան վերայ Պարսկաստանում; նա բաւական մեծ է, բայց չէ բերում մեզ ոչինչ օգուտ; մեք ունիմք մեծամեծ ծախսեր ըստ կազմվածին և ըստ թոշակին մեր դեսպանութեան; Աղքունիքն, նահանգաց կառավարիչքն, ռախտարի ժողովողներն ամէն քայլ վերայ, մինչև ճանապարհաց աւազակներն, ամենեքեան, բոլորն, դուրս են քաշում

տարէ ց'տարի Ընկերութեան գանձարանից մեծամեծ գումարներ և նոցա փոխանորդն չ'է դուրս գալիս մեր ապրանքների ծախելուց այս երկրում:

Մեք յօժարութեամբ կ'հրաժարուէինք այս տեղի անօգուտ վաճառականութենէն մեզ համար և հոգով ի՛ցանկանայինք, որ Ռուսսաց գործարաններն լաւացնեն իւրեանց յօրինածներն և կարենային գոնէ փոքր ինչ բռնել մեր ապրանքների տեղն Պարսից համար; բայց անյաջող ցնորքն Ռամբա-Դրմօլով—տրանզիտն Եւրոպական ապրանքների թիֆլիսով 'ի Պարսկաստան—բնաւին խլեց Ռուսսաց գործատէրերի ձեռից ամենայն ապագայ յոյսն բաւականութիւն տալոյ Պարսից; տրանզիտն ծանօթացրեց նրանց աւելի լաւ ապրանքներին և նոքա ինքներն կերթան ուղղակի Կոնստանտինօպոլ նրանց առնելոյ համար, Ահա տրանզիտի պտուղն: Լա՛ւ է թէ Ռուսսաց գործատէրերն կարենան և իմանան շահուիլ ստացած դասովն:„

Մակդոնալդի այն խօսքերն, որ Անգլիացիքն ոչինչ օգուտ չունին Պարսկաստանի վաճառականութենէն, բոլորովին ստոյգ էին.—

Պարսկաստանն չ'էր կազմում Անգլիացոց

Հնդկաստանի Ընկերութեան համար մին առևտուրի արդեանց երկիր, այլ նա էր իբր դրացի, որոյ հետն պիտոյ էր վարվիլ քաղցրութեամբ իւրեանց հանգստութեան համար; նորա հետ կռուելն չ'էր ներկայացնում ոչինչ շահաւէտութիւն, այլ կարողէր մեծ կորուստ պատճառել; առա բաց 'ի հասարակ սիրոյ բարի դրացութեան, պէտք էր ևս տալ միշտ նրան մին ինչ իւր պարտիզեցն, որ նա ինքն չ'դնայ այն տեղ շատ վերառնելոյ և չ'մոլորեցնէ մշակների վարքն։

Իսկ Մակդոնալդի յանդիմանութիւնք, որպէս և այն ժամանակուան բոլոր Ընդլիացոյ գործակալաց Հոպպոպոպոպ քարոզներն։—իբր թէ տրանզիտն վնասակար ներգործութիւն ունէր Ռուսսաց գործարանների վերայ և Ռուսսաց վաճառականութեան վերայ Պարսկաստանի մէջն,—այդ խօսքերն և քարոզներն ոչ այլ ինչ էին. եթէ ոչ պարզ ոյպանք, կոպարեալ սպոնկեն, հնարագիտութեամբ հաշուեալ և պատշաճեալ առ լեուլն չ'գիտութիւնն այն ժամանակին Ռուսսաստանում, թէ որքան օգտակար էր նորա համար ներգործութիւնն տրանզիտի։—Ոչ ոք 'ի գործատերերից և վաճառականներից, որք միա-

հաւաք խնդրելէին տրանզիտի կործանումն, չ'էին տեսել ոչ Պարսկաստանն և ոչ թէ Թիֆլիսն, որ անձամբ անձին կարողացել էին վերահասու լինել թէ ի՞նչ էին տեղական յատկութիւնքն և որ՞քան մեծ էր մասն Ռուսսաց ապրանքների այն առևտրում; ևս ականատես էի 1829—1830 տարերում, որ Թաւրիզն, Զանջանի, Ղումի, Քաշանի, Իսպահանի, Համադանի բազարներն լցրած էին Ռուսսի ապրանքներով, խառն Լէյպցիգի ապրանքների հետ; Ռուսսաց նանկէք, խօլստինկէքն, սերուսներկ ալ և կապոյտ չիթերն, թեթև և ուրախագոյն մահուդներն, ձեռնէ ձեռն խլելով ծախվում էին իւրեանց սեփհական անուամբ «Ռ—ս—ս—ս;» սովորական սայլապանաց ձեռքով ապրանք բերելն—Մակարիեցն, Շուիցն, Մոսկվայիցն, յամրաշարժ էր երևում; նրանց բերում էին Թիֆլիս արաղընթաց փոստայի սայլերով, որք իջևաններում բաւական չէր գտնուիլ առանց փոստայի պահողների առանձին պատրաստութեանց։

Եւրոպացոյ և Ռուսսաց ապրանքներն 'ի միասին գտնուելով Պարսկաստանի բազարներում ո՛չ թէ չ'էին մերժում մինն միւսին նախանձաբար, այլ, ընդ հակառակն, բարեկա-

մաբար լցնում էին միմեանց արժանաւորութիւնքն յ'աչս և յ'ախորժանս գործածողաց, կանոնաւորելով ևս միմեանց յարակցութիւնն ըստ որպիսութեան և գնոց նոցա։

Ասիայի բազարներումն, որպէս և Եւրոպացոց վաճառական կենդրոններումն, գնողներն որոնումեն իւրեանց հեշտութիւնքն; նոքա հաղիւ գնումեն առանձին ապրանաց պահեստներում, քան թէ դուքաններումն, ուր գտնումեն զանազան ազգի և տեսակի ապրանք 'ի միասին; այսու պատճառաւ շրջող վաճառականներն բերումեն նստող վաճառականաց համար զանազան տեսակ ապրանքներ, մանր ծախելոյ հարկաւորութեանն համեմատ; այսու պատճառաւ և տրանզիտի շարունակութեան բոլոր ժամանակին, Թիֆլիսիցն տանումէին Պարսկաստան Եւրոպացոց գործածների հետ ևս մեծաթիւ Ռուսսաց ապրանքներ; ապա դադարումն բերելոյ առաջնոցն պէտք էր չ'աւելացնել, այլ պակասեցնել և բերելն յետիններին։

Ռուսսաց գործատէրերն և վաճառականներն այլկերպ կարծէին.—

Երբ տրանզիտի փակելոյ ժամանակն մօտեցաւ, եկան առաջին անգամ 'ի Թիֆլիս,

տեղեկանալոյ համար, հարուստ գործատէրերն Պօսիլնիք և բաց արին այս տեղ մեծ վաճառատուն Ռուսսի ապրանքների, այն յուսով, որ Պարսկաստանումն դատարկ մնացած տրանզիտի տեղն բռնեն; բայց փորձն ցոյց տուեց նոցա կարծեաց սխալմունքն և, յետ հինգ տարուան անյաջողութեան և վնասուց, հարկադրեցան վերջացնել իւրեանց գործն։ Նոցանից յետոյ եկաւ, միևնոյն նպատակաւ 'ի Թիֆլիս գործակալութիւնն Լէպիոշկինի, Բօգօժինի և ընկ'', որ չ'դիմացաւ ոչ թէ երեք տարի. Վերջապէս մին կատարեալ հասարակութիւն Ռուս գործատէրանց և վաճառականաց, 'ի ներքոյ առաջնորդութեան Պուշկօվների և Զեսվէրիկօվների բաց արին Թիֆլիսումն ընդարձակ պահեստս Ռուսսաց զանազան տեսակ ապրանաց Պարսկաստանի համար, բայց հարկադրուեցաւ բաւականանալ իւր ապրանքներն փոքր ինչ սաղացնել Թիֆլիսի և Ենդրկօվկազեան հարկաւորութեան համար, յընթացս մօտ հինգ տարւոյ, և այն ապրանքներին բնաւին չ'յաջողեցաւ անցանել 'ի Պարսկաստան։

Եթէ այսպիսի փորձառութիւնք Ռուսսաց գործատէրանց և վաճառականաց ձեռնարկած

լինէին տրանզիտի սկիզբն կամ շարունակութեան ժամանակին, այն պարոններն, փոխանակ աշխատելոյ տրանզիտի խափանման վերայ, կ'գտնէին նորա մէջն հզօր բացող, Ռուսաց վաճառման համար, լայնածաւալ ճանապարհ մինչև ց'Փանջաբ և հանձարեղ խորհուրդն Գամբա ասպետին, սկսուած տրանզիտով, կ'պակուէր հաստատուն հիմնարկութեամբ Եւրոպական և Ռուսական ապրանաց համար բնական, ամենակարճ և ցամաքային ճանապարհի 'ի Հնդկաստան երեսներորդ տարիքներումն։

Բարձր ատիճանաւորք թագաւորականք, բարձր նայեցողք առարկայից վերայ և մտիկ ճանաչողք Անդրկովկազի, Թուրքիայի և Պարսկաստանի երկիրների—Երմոլովն, կոմս Վորոնցովն և իշխան Մէնշիկովն միապէս տեսանումէին օգուտն Ռուսաց վաճառականութեան, անցկացնելումն Եւրոպացոց ապրանքների Թիֆլիսի ճանապարհաւ 'ի Պարսկաստան; և միապէս նախագուշակում էին, որ այս ճանապարհի փակուելոյ յետ, անյապաղ կ'բացուի Եւրոպացոց ապրանաց համար նոր ճանապարհ Տրապիզոնի և Էրզէրումի վերայ դէպ 'ի Թավրիզ; իսկ այլ մարդիկ Ռուսաստանումն և Թիֆլիսումն,—ոմանք չ'ուսելով բաւական ծանօթութիւն ոչ երկիրների և ոչ զօրութեանն, որ ներգործէր այն վաճառականութեան վերայ; և այլք առաջնորդեալք, կարելի է, առանձին մտադրութեամբ վասն պարսաւելոյ ամենայն նախընթացին (Զավիլէյսկին և այլք) տեսնումէին Ռուսսիայի համար վնասակար Թիֆլիսին տուած միջնորդութիւնն Եւրոպական առևտրին Պարսկաստանի հետն և հաւատացնում էին, որ, Թիֆլիսի տրանզիտի խափանելոյ յետ, Եւրոպական ապրանքներն չ'են կարող Իւրեանց համար ճանապարհ բանալ դէպ 'ի Պարսկաստան Թուրքիայի երկրովն։

Երբ Թիֆլիսի տրանզիտի ճանապարհն կապեցաւ, ճշմարտիւ, նրան ընթացք տուին Անգլիացիքն Տրապիզոնի և Էրզէրումի վերայ դէպ 'ի Թավրիզ; միայն ճիշտ հաշուով պակասայրին նորա ոլքանութիւնն ըստ հարկաւորութեանն Ռուսաստանի սահմանակից Աղերբայջան նահանգի, ևս մասամբ Գիլանայ, Մազանդարանայ և Աստարաբադայ համար, բայց նրանից յետոյ տրանզիտն չ'կարողանայ անցանել ուրիշ հեռու տեղեր ոչ 'ի Հարաւ և ոչ ևս բնաւին յ'Արևելս, որ այն տեղերն դրած Անգլիացոց կարգն չ'քանդուի։

Պատար հասեալ գործն ոչ թէ չ'ուղղեց սխալմունքն հակառակորդաց Թիֆլիսի տրանզիտի առևարին; այլ ևս արմատացրուց նոցա մէջ ատելութիւն առ ինքն Անդրկովկասեան երկիրն; այս հակառակորդներն պատկերացնում էին Անդրկովկասն ինչպէս անկուշտ աւելորդ սունկն, կպած Ռուսսիայի վերայ, որ ուտէ նորա արիւնն և ոսկին; նա ևս արտաբերեցին խօսքերն — կտրել այդ աւելորդ վերաբուսեալ սունկն և ծախել Պարսից ('ի հարկէ Անգլիացոց գիննէյ դրամով) չ'մոռանալով ամենևին, որ առանց Անդրկովկասին ա'չ Պարսկաստան և ոչ Թուրքիայն չ'էին ունենալ առանձին տանջանք խղճմտանաց—տեսանել Անգլիացոց նաւերն կանգնած Ալզայի և Դնեպրի գետաբերանաց դէմն; և այնու ամենայնիւ Ռուսսաց արիւնն և ոսկին թափուելոյ էր Կովկասի Հիւսիսային կողմն, կարելի է ևս Դոնի վերայ:

Այս ամենայն գործումն—խափանման Թիֆլիսի տրանզիտին, տարածման կարծեաց իբր թէ Անդրկովկասն ՀՕգուտակար է Ռուսսիայի համար և անմիաւորութեան իւրաքանչիւր շահուց այս երկու երկրների, —անկարելի է չ' զարմանալ մին կողմից Անգլիացոց մեծաչափ

հնարքներին, հեռատեսութեան և գործունէութեան վերայ; և միւս կողմից Ռուսսաց վաճառական դասի անհասկանալի դիւրահաւատութեան վերայ; բայց ևս աւելի զարմանալի են տարակուսութիւնքն, ցուցեալք 'ի կառավարչական գործավարաց.—

Տրանզիտական առևտուրն Թիֆլիսի վերայ փակուեց, նորա համար բացուեցաւ արդէն այլ ճանապարհ, լեռնային Հայաստանովն, որն տարին վեց ամիս անանցանելի է ձիւնէրից, և մնացած ամսներումն ամառանոց բանակարան էր լինում թափառական և յափշտակութեամբ պարապող Քիւրդերի; այս փոփոխութեան միջոցն ծանր շօշափեցին գործատէրերն Ռուսսաստանի, բնակիչք Անդրկովկասի և ևս ինքն Պարսկաստանն. Քիւրդերն կամենումէին պահպանել իւրեանց զբօսասէր ազատութիւնն և անկոխութիւնն իւրեանց ամառանոցաց; նոքա 1833 թուին կողոպտեցին Պարսկաստան գնացող քարվանն մօտ 200 բեռն ապրանքի; կրկնեցին եկող 1834 ամին կողոպտումն քարվանի 1500 բեռն ապրանքից, մեծ գումարի. Պարսկաստանն մի կողմից սպառնացաւ Թուրքիային պատերազմով վասն աւազակութեան հպատակաց նորա, և միւս

կողմից ցայտնեց Ռուսաստանին իւր խնդրքի առաջին խօսքերն,—որ Թիֆլիսի տրանզիտն կրկին նորոգուի։—Արևէր, որ ինքն վիճակն պատրաստել էր հանգամանքներն, որք կարող էին ուղղել նորա կամաց ընդդէմ սխալներն և վերադարձուցանել Ռուսաստանին նրան պատկանեալ տեղն և ազդեցութիւնն Արևելից առևտուրի մէջն; բայց Ռուսիայն մերժեց նորէն իւր օգուտն։ Երբ որ Անգլիացոց միջնորդութեամբն Օսմանցոց և Պարսից միացած զօրքն անյաջողութեամբ և վնասով կռվումէին Ռիւրդերի դէմն, բանակելոց առ Արարատի Հարաւային ստորոտին, Բարձն Բօգնիի կարգադրութեամբն Ռուսաց զօրքն, 'ի ներքոյ հրամանի իշխան Ռէբուբօվին, յարձակուեցան նրանց վերայ քամակիցն, խլեցին նոցանից կողոպտած ապրանքներն և տուին Պարսից ձեռն, ստանալով իբր պարգև—յ'Օսմանցոց, 'ի Պարսից, 'ի Ռիւրդաց և իսկ յ'Անգլիացոց ..... ծպտանք ղանողն նշանակեալ։ Գլխաւոր ցեղք Ռիւրդաց մշտապէս թողին Արարատի ամառանոցքն, և այնուհետև Եւրոպացոց ապրանքներն, ահա քառասուն տարիէ, երջանկութեամբ կ'անցանեն այն

տեղերի վերայ և կ' գնան 'ի Պարսկաստան, ըստ նախատեսութեան Անգլիացոց։

Աստահութիւնն այն Ռուսաց վաճառական և կառավարական գործարարաց, որք աներկբայ էին թէ փոփոխութեան հետևանքն օգտակար պէտք է լինին, և որք զրդռեցին փակել Թիֆլիսի տրանզիտն, չ'էր կարող կանգնել կիսաճանապարհի վերայ; նոքա բռնելով իւրեանց ցանկութիւնն իբր դլուխ դալոյ բան, համարեցան և սարելի այնպիսի կարգադրութիւն առնել, որ Եւրոպացւոց ապրանքներն բոլորովին աքսորվին Պարսկաստանի և հեռաւոր Արևելեան բազարներից և նոցա տեղն տալ միմիայն Ռուսի ապրանքներին։

Այս մարդկանց մտաց մաքրութիւնն, հայրենասիրութիւնն և ձայների բազմանալն ներկայացնում էին մեզ յարմար միջոց, եթէ ոչ 'ի կատար հասուցանել նոցա դիտաւորութեանց, գո'նէ յորդորել յառաջադիմութիւնն վաճառականական և գործարանական արուեստին Ռուսիայի։—'Ի փետրվարի 1836 ամի թագաւորական խորհրդարանումն առանձին Կոմիտէտ կազմուեցաւ, որոյ անդամներն էին Նէսէլրոդէ, Տօլ, Կանկրին, Զէրնիշօվ, Պասկևիչ Մէնշիկով, վասն քննելոյ Ռուսիայի

վաճառականութեան Ասիայի մէջն տարածման առաջադրութիւնքն. — Աշխնէկոյի — վասն մուծանելոյ Ռուսսաց վաճառականութիւն 'ի Օմիւռնա; Կարէլինի—Կասպից ծովու Արեւելեան ափնումն Խիվայիցն մինչև Աստարաբադ; Բլարէմբէրգի—ըստ Մուրաւարեայի, Արալեան ծովու, ըստ ճանապարհաց 'ի Խիվա, Բուխարա, Սամարկանդ, Բալխ և Հերաթ:

Առաջադրութիւնք անձանց և յայտարարութիւնք հասարակական կարծեաց դրին Թագաւորական Խորհրդարանումն սկիզբն գործոյ, ըստ որոյ հրամայեցաւ կազմել առանձին կոմիտէտ, յանձնելով նրան խմբագրել սահմանադրութիւնքն Ռուսսաց Ասիական վաճառական Ընկերութեանն:

Նոր Կոմիտէտումն մանակից եղեն երեւելի գործատէրերն, վաճառականներ և բանկիրներ; խմբագրեալ նորա մէջ, սահմանադրութիւնքն տալիս էին Ռուսսաց Ասիական Ընկերութեանն, առանց խառնուելոյ ուրիշ ընկերութեան, առանձին իրաւունք տարածելոյ իւրեանց վաճառականութիւնն բոլոր Ասիայի վերայ, բաց'ի Կեախտայն, ըստ ամենայն ընթացից—Սիբիրի, Օրէնբուրգի, Աստրախանի, Թիֆլիսի, Բէդուդ—Պալէի, Տրապիզոնի, Կոնստանտինոպոլի, Օմիւռնեայի. Մայրագումարն Ընկերութեան նշանակուած էր պատուելի Հելլիոն ռոբէն պրիգոցիս 'ի բաժանորդ; դործողութիւնք Ընկերութեան պէտք է լինէին 'ի ներքոյ յատուկ հովանաւորութեան Առաւարութեան և ստանալ նրանից օգնականութիւն ամենայն հնարքով և փողով:

Կոմիտէտի օրադրութեանց քննելոյ ժամանակին Մինիստր Ֆինանսների մօտն, դեկտեմբերի վերջումն 1836 ամի և յունվարի սկզբումն 1837 ամի, ծագեցան հարցմունք—.

1) Կան արդեօք Ռուսսաց վաճառականութեան մէջն մարդիք, որք ծանօթ լինին այն տեղերի հետն, ուր Ընկերութիւնն ցանկանկումէ տարածել իւր ձեռնարկութիւնքն, որ գործերն սկսուին և յառաջ գնան հասկացողութեամբ:

2) Ընկերութեանն առանձին երաւունք տալով համօրէն Ասիական վաճառականութեան վերայ չ'ե՞ն խափանուիլ շրջանք առևտուրի, որք կան այժմ 'ի ձեռս սահմանական փոքր վաճառականների, վարողաց փորձառութեամբ; և կարելի՞է սպասել յ'Ընկերութենէն շահաւէտութեամբ փոխանակել նոցա,

իւրեան նոր մարդկերովն, առանց վնասու ներ-
կայ և ապագայ վաճառականութեանն Ռուս-
սիայի:

3) Միտքն (Պրոխորովի) կազմել առաջ
այոց ընկերութիւն, որ նա մանի յետոյ զլ-
խաւոր Ընկերութեան կազմութեան մէջն,
կարելի՞է արդեօք կատար հասուցանել:

4) Կարելի՞է (ըստ առաջարկութեան
Պոսիլնի) Անգլիոյ բամբակի մանածի մաքսն
պակասացնել:

5) Կարելի՞է ընդունել (ըստ առաջար-
կութեան Բոլոտովի և Պոլէսովի) որ Անգլի-
ացոց մանածի մաքսն յետ դառնայ, երբ նրա-
նից Ռուսաստանումն գործուած ապրանքն
սահմանին դուրս գնայ:

6) Ռուսաց գործատէրերն, որք ցանկա-
նումն իւրեանց ապրանքների ծախսն տարա-
ծել բոլոր Ասիայի մէջն, և այն տեղիցն աք-
սորել Եւրոպացոց ապրանքների հարկաւորու-
թիւնն, ունեցե՞լ են արդեօք իւրեանց աչքի
առջևն, որ ամէն տարի բերվում են Ասիայիցն
Ռուսաստանի սահմաններն կոպիտ բամբակա-
գործ կտաւ, չեթ, և զադաք, բազում միլլիոն
ռուբլոյ, վասն հարկաւորութեան Անդրկով-
կասի, Պովկասի, Դոնի, Աստրախանի, Սարա-

տովի Օրէնբուրգի և Պազանու նահանգաց:
Ռուսսաց գործարաններն հոգացողութիւն
արե՞լ են որ, այն կոպիտ ապրանաց բերելն խա-
փանելոյ համար, իրանց մէջն գործեն նոցա
նման, վասն բաւականացնելոյ այն տեղերի
ժողովրդեան ախորժանքն և սովորութիւնն:

Այս ամենայն հարցմանց վերայ ընդդի-
մական պատասխաններն առին եղբակացու-
թիւն,— որ Ռուսսաց գործատէրերին և վաճա-
ռականներին հարկաւոր է դեռ ժամանակ և
պատրաստութիւն հնարաց, որ իւրեանց բարի
ցանկութիւններն հասցնեն կատարման:

Այսպէս Անգլիացոց դիտաւորութիւնքն
տօնախմբեցին.—Նոքա ո՛չ միայն կարողացան
թաղել 1826 թուին իւրեանց թշնամի Անդր-
կովկասեան տրանզիտն ձեռամբ Ռուսսաց գոր-
ծատերանց և վաճառականաց, որք երևեցան
անպատրաստ նաև 1837 թուին, վասն ինքնա-
գլուխ առևտրական ձեռնարկութեան Ասի-
այում; այլ արմատացրին ևս Ռուսսաստանումն
հաւատն, իբր թէ այդ ճանապարհն վնասա-
կար է Ռուսսաց վաճառականութեան համար
Աստանօր ամենայն ինչ կատարեցաւ....!

Սուեցի ջրանցքն, որ Ֆրանսայեցիքն
փորեցին վասն կարճացնելոյ միջազգային ճա-
նապարհին 'ի Հնդկաստան, տուեց Անգլիա-

ցոց նոր հոգս. Նոքա ծաղրածելով ընկալան գործոյ առաջարկութիւնն; կամեցան խառնարկութիւն բացանել մշակութեան դէմն; տիրեցին, յամենայն դէպս, հարկաւոր տեղերի Պարմիր ծովու վերայ; վերջապէս առաջադրեցին գնել աւարտած արդէն ջրանցքն,—բայց ոչ Լէսսէպս և ոչ Եգիպտոսի Փոխարքայն ցոյց չ'տուին յօժարակամութիւն այն մասին; և դարձեալ ի՞նչպէս կարող էին Անգլիացիքն զերծանել ամենայն տէրութեանց պահանջմանցն, վասն հաւասար իրաւունքով վայելելոյ այդ միջազգային ճանապարհն:

Սակայն Անգլիայն հարկաւոր է համարում ունենալ, ինչ և իցէ, իւրեան յատկապէս պատկանեալ կարճ հաղորդութիւն Հնդկաստանի հետ: Նա մտածեց առաջ, ընտրել յարմար տեղ Սիրիոյ եզրումն Միջերկրական ծովու և այն տեղիցն տանել երկաթէ ճանապարհն դէպ 'ի Բաղդադ—Բասրայ, և Պարսից խորշումն նա կ'լենէր իւր տանն; բայց երկար և զուրկ 'ի կենաց անապատն, տեղիք զբօսանաց անտուն և յափշտակող Արաբաց, չ'էր խոստանում Անգլիացոց հարկաւոր պայմաններ յարմարութեան և ապահովութեան: Յետ այնորիկ Անգլիացիքն մտածեցին, և

այժմ էս կ'ջանան, կամուրջ ձգել Բոսֆորի վերայ, Կոստանդինոպոլէ 'ի Սկիւտար, և այն տեղիցն շինել երկաթէ ճանապարհ ըստ նեղուցաց Տաւրոսի և ընդ մէջ գետոցն Եփրատայ և Տիգրիսի մինչև ց' Բաղդադ—Բասրայ, դիտաւորութիւն ունելով շարունակել նրան ընդ Արաբային կամ ընդ մէջն Պարսկաստանի և ընդ Բէլուջիստան առ ներքնավայրս Ինդոսի—առ Շքարփուրն:

Այս առաջադրութիւնն ցուցանումէ բարձրագոյն աստիճանն ջանից և զոհաբերութեանց, որ Անգլիայն պատրաստ է այժմ ընդունիլ իւր վերայ, վասն պահպանելոյ իւր առանձին տիրապետութիւնն Հնդկաստանի վերայ: Բայց ասա ծագումն խնդիրք, որոց վճռելոյ համար խօսքն պատկանումէ փաստերին:

Կարողէ թուրքիայն համաձայնիլ տալ Անգլիացոց ոտնատեղի իւր մայրաքաղաքումն և ընդ բոլոր տարածութիւնս իւր Ասիական դաւառաց, առանց վնասելոյ իւր իշխանութեան և իւր հպատակաց բարեդրութեան, այնպիսի հիւրերից, որք ամէն տեղ համարումն իւրեանց իբր տանտէր:

Կարողէ Պարսկաստանն, ըստ նոյն իսկ պատճառաց, համաձայնիլ տալ Անգլիացոց

բնակիլ 'ի Հարաւային սահմանս իւր իշխանութեանց, — ընդ եղբս Պարսից խորշին և Հնդկաց ծովուն, և աւելի ևս դժուարութեամբ ընդ Պարսիստան և ընդ Վրէրման։

Պարոնէ ինքն իսկ Անգլիայն համաձայնել տալ իւր անթիւ գումարներն 'ի ձեռս Թուրքիայի վասն շինելոյ երկաթէ ճանապարհն մինչև 'ի Բաղդադ — Բասրայ, և Պարսկաստանին, վասն շարունակելոյ այն ճանապարհն ընդ Կուղիստան կամ ընդ ծովեզրն, առանց յուսոյ յետ առնել իւր փողերն այդ տէրութիւններից, և առանց ստանալոյ նրանցից իւր համար անուն և իրաւունք փոխոր այդ ճանապարհների։

Վերջապէս, յետ կատարեալ շինութեանն երկաթէ ճանապարհին Կոնստանտինոպոլիցն մինչ 'ի Բասրա և Շքարիուր, կարելի՞է խլել իրաւունքն բնութեան օրէնքներից և միջազգային ձգտողութենէն առ ամենայնեսին կարձացնելն ճանապարհի հաղորդակցութեան Եւրոպիոյ և Հնդկաստանի մէջ։

Թուրքիայի համար անցան այն ժամանակներն, երբ Արևմտեան Տէրութիւնք, մի կողմից անդադար վախեցնումէին նրան Հիւսիսային Արկուոմն և միւս կողմից միշտ

ալէկոծելով քրիստոնէից ազգերն Եւրոպական և Ասիական դաւառներումն թագաւորութեան, անդորձ առնէին ամենայն շարժմունքն նորա առ բարեկարգութիւն ներսին գործոց իւրոց։

Փոխանակ երկիւղի, Թուրքիայն տեսաւ Ռուսաստանից անշահասէր փրկութիւնն իւր աթոռոյ և ցեղի թագաւորութեան, որք մօտ էին խափանման առաջի ճարտարութեան Մահմեդ—Ալի փաշի և թրոյ Իբրահիմ փաշի Եգիպտացոց։ Երեկ դեռ ևս, Սև ծովի խնդիրն վճռելոյ ժամանակն, փոխանակ չար գուշակութեանց Արևմտի, Թուրքիայն տեսաւ Ռուսաստանից հաստատ բարեկամութիւն, և այժմ, լեռվին հաւատալով անկեղծութեան Հիւսիսային դրացւոյն, նա ազատեցաւ խորհրդներից Արևմտեան շահասէր բարեկամաց իւրոց, զտաւ հանդարտութիւն, բարձրացրուց իւր ձայնն Եգիպտոսի վերայ, միտք բերեց Տունիսին նորա պարտաւորութիւնքն, հրամայեց Ռումինին շտապով վերջացնել երկաթէ ճանապարհներն և ինքն իսկ կարողացաւ իրան տանն շինել երկաթէ ճանապարհ Աքիւթարիցն առ Խմիդ և շարունակել նրան մինչև Նսքի—Շքհարն։

Բարի՛ ժամ։

Այս երկաթէ ճանապարհն կարող է գնալ աւելի հեռու և զանազան կողմեր ընդ Հիւսիս և ընդ Հարաւ; Թուրքիայի կառավարութիւն կարող է պարապիլ քաղելով արդար օգուտ իւր երկրների ամենահարուստ բնութենէն, և ամենընդունակ, վասն բոլոր երկրագործական, արհեստական և վաճառականական տեղեկութեանց, իւր այլատոհմ քրիստոնեայ հպատակներիցն, որոց համար, պիտոյ է ասել, առ'ի պատիւ Թագաւորաց և բարձրագոյն Ատիճանաւորաց, համարեա՝ թէ Թուրքիայի ամենայն ժամանակաց, որ նոքա գիտէին յարգի համարել այս քրիստոնէից արժանաւորութիւնքն և ջանք առնէին միշտ հարթել նոցա համար Ղուրանի տարակուսութիւնք ընդդէմ Աւետարանին, և եթէ Թուրքաց վերայ գրուած, աններողութիւնն կրօնից, զո՝նէ փոքր ինչ մասամբ ճշմարիտ լինէր, ապաքէն վաղուց ոչ մնայր ոչ մի քրիստոնեայ 'ի բոլոր Տէրութեանն:

Բայց Թուրքիայի հոգատարութիւնքն երկաթէ ճանապարհների շինելոյ մասին, որ օգուտ քաղի իւր երկիրներից և իւր քրիստոնեայ հպատակներիցն, կարող է գնալ յարևելս միայն մինչ'ի Դիարբէքիր; անցանել աւելի հեռու կ'նշանակէ աշխատել Անգլիացոց համար ըստ ամենայն նպատակաց նոցա: Թուրքիայն ո՝չ կարէ և ո՝չ պարտի անձնատուր լինել ոչ իմիք, այսու մտօք, շողոքորթութեանց, որք թանգ կը նստին իւրեան, ազատութիւնն կորցնելով 'ի յաւիտեան:

Պարսկաստանն, իւր հերթին, չ'ունի պատճառ աւելի շնորհակալութեան և վստահութեան առ Անգլիացիս: — Նորա յիշողութիւնքն դեռ չ'էին կարող դուրս գնալ հետևանքն յորդորութեանց, այդ բարեկամաց, առ ողբալի պատերազմն ընդդէմ Ռուսաց 1826 թուին, և Մակնիլի այպանաց — Երաթի պաշարման ժամանակին. Պարսկաստանն չէ կարող չ'խոստովանիլ ոչինչութիւն դրութեանն, որոյ մէջն դցել են նրան Անգլիացիքն, և անվախճան ձեռներն ծալած, շարունակել անշարժ անզգայութեամբ հայել թէ ո՝րպէս նոքա խլելն և տանումն իւրեանց երկար ծովային ճանապարհով նախաձնողական սեփականութիւնն Պարսկաստանի — Նդկական ցամաքուղի վաճառականութիւնն ընդ Միացած աշխարհին:

Ահա՝ արդէն կէս դար է, որ Ռուսիայի բարեկամութեամբ Պարսկաստանն վայելում է

կատարեալ տնային հանգստութիւն։ Նա աւարտեց իւր ամենայն ցեղապետական խնդիրներն; հաստատեց իւր տոհմային թագաւորութիւնն և դահաժառանգութիւնն; նա է յարդի Տէրութիւն, կազմուած մեծ և համասեռն ազգից, որ քաջամարտիկ է առաջի բոլոր Ասիայի դրացւոց իւրոյց; հանճարեղ է անձնական և հասարակական մտքով; գործունեայ է ըստ ամենայն մասանց երկրագործութեան, արուեստից և վաճառականութեան մինչև ց'արիական ձգտումն առ Եւրոպայն։ Պարսկաստանն ո՛չ կարող է և ո՛չ պարտի— մոռանալով առած դասերն և անհոգս լինելով իւր բարեդրութեան համար — համաձայնիլ յօժարակամ, որ Անգլիացիքն շղթայակապ առնեն յաւիտեան նորա ամենայն ազատութիւնն, ամենայն արդիւնաբերական և վաճառական ապագայն, իւրեանց երկաթէ ճանապարհներովն, յորոց 'ի բաժին Պարսկաստանի կ'տան նոքա միայն ծուխն շոգեոտոյլերի։ Այլ սարսիլ Պարսկաստանին առ այս համաձայնութիւնն, Անգլիայն չէ՝ ունենայ բաւական զօրութիւն և նա աւելի կ'կանչի իւր կախարդութեան վերայ Հնդկաստանումն, շատ անակնկալ և անուղղելի չփոթք։

Ընդունելով ևս անկարելին, որ Թուրքիայն և Պարսկաստանն թողնուն անցկացընել իրանց երկիրներումերկաթէ ճանապարհն, յատուկ և առանձին պատկանելի Անգլիացւոց; նրանց խորհուրդոց և օգուտներին; նրանց տիրապէտութեանն Հնդկաստանումն; տարածման միայն Անգլիոյ ապրանաց ընդ ամենայն միջոցս ճանապարհի, Բոսֆորիցն յ'Արևելս; նրանց հեշտութեանն, երբ հարկաւոր լինի, զօրք և զէնք ուղղարկել 'ի Հնդիկս և այն տեղեցն բերել ապրանքներ, որք, ծանրաշխատ բնակիչներից նորա, մանումն Անգլիացւոց գործակալաց տներն 'ի ներքոյ գնահատութեան վասն ամենեցունց, որք չ'են Անգլիացիք; ապա հարցանելի է.—

Ինչ օգուտ կ'բերի Թուրքիային և Պարսկաստանին այնպիսի հաշիւներով շինած երկաթուղին Անգլիացւոց. 'Հարկէ նա Թուրքիայի միջոցն անցանելոյ է ո՛չ թէ այն երկրի բերքերի և վաճառականութեան տեղերն միացնելոյ համար, օրօր—մրօր շրջաններով, այլ անցանելոյ է, ուր կարողանայ, սարերի նեղուցներովն, գնացքով ջրոց և անապատներով, մի միայն գնալով առ վերջին կէտն Թուրքիայի— 'ի Բասրա։

Ընդ Պարսկաստան, նոյնպէս, Անգլիա-

կան երկաթուղին չի պարտաւորիլ կապիլ իրանց մէջն վաճառականութեան և բնակչաց գլխաւոր կենտրոններն 'ի ներսս երկրին; և դարձեալ ի՞նչպէս պիտի թռչի նա Հայաստանի բարձունքների և Քուրդիստանի սարերի վերայ, որ հասնի Պարսկաստանին։ Անցանել Աղբիստանի միջոցն Շուստարի կամ Դասֆուլի կրճերոցն առ Իսպահան, որպէս կարծումեն, աշխարհացուցին նայելով, հազիւ թէ տայ գործով իմն կարելութիւն։ Այսու յետ յոյժ դժուարութեամբ հասանելոյ մինչև ց' Իսպահան, Անգլիական երկաթուղին չ'լինելով մասնաւոր անձանց գործառնութիւն, անցուցանելոյ վճարն սահմանելոյ համար նոյն իսկ երկրեցն, ընդ երաշխաւորութեամբ Տէրութեանն, չ'ի ունենայ օգուտ բարձրանալ 'ի Թէհրան և գնալ հեռի 'ի Հիւսիսային-Արևելս; այլ հաւատարիմ մնալով իւր նպատակին, Իսպահանէն շուտ կ'տայ 'ի Բէրման և առնելով իւր ձեռն աւելի լայն գոտի Հարաւային Պարսկաստանի, անշուշտ կ'կամենայ Բելուջիստանով, ինչպէս կամենումէր առաջ, ծովեզերքն ուղղել ճանապարհն առ իւր սիրած տեղն—առ Շքարփուրն։

Վերջապէս, կարելի է համարել երկաթի

շուրջն յաջողութեամբ դրած Կոնստանդինոպոլիցն մինչև ց' Շքարփուր։ Դարձարաններն ցամաքային Եւրոպիոյ, 'ի հարկէ, կ' ցանկանան այն ժամանակն ուղարկել իւրեանց ապրանքներն ծախելոյ այդ ճանապարհի վերայ; բայց առանց երկբայութեան անցուցանելոյ պայմաններն Անգլեացիք կ'հաշուեն այնպէս, որ վաճառման գինն չ'կարողանայ ձեռք բերել ճանապարհի ծախսերն այս խոստնչների համար։ Յայտնի է որ ճանապարհն կ'շինուի յատուկ Անգլիական ապրանքների համար, Անգլեացոց շահադիտութեանց համար։ Վաճառականներն մեացած Եւրոպիոյ, Թուրքիայի, Պարսկաստանի կարողեն, 'ի հարկէ, զբօսնուլ երկաթի ճանապարհի վերայ մինչև ց' Շքարփուր, բայց այն տեղն կ'իմանան, որ անկարելի' է տեսնուիլ տեղական բնակչաց հետն այլ կերպիւ բաց 'ի Անգլեացոց լուսամտոցն; իսկ վաճառական գործեր բռնել—ծախել, առնել, փոխել, նոքա չ'են կարողանալ կատարել արտաքոյ Անգլիական Գործակալաց տներից։ Թանգագին Վաշմիրու շալերն տալիս են ծանրաշխատողներին միայն մին կտոր հաց, կեանքն պահպանելոյ համար, իսկ գինն և արժանաւորութիւնն այն հիւսուածոց ելանեն

ո՛չ թէ նիւթերի սրպիսութենից և ո՛չ թէ արհեստաւորաց հմտութենից, այլ Անգլիացւոց, դուրս թողնելոյ, կնքիցն։ Անգլիացիք— ապետք խափանման գերութեան Աֆրիկայի և Ամերիկայի, վարին առանձին հոգաբարձութեամբ իւրեանց Հնդկաստանի ստրկաց համար.— Նոքա պահումն նրանց բարոյական խիստ կանոններով.— հնազանդելով հարուստ տերանց և նրանց դիրացնելով իւրեանց քրտնքով, ապա թէ ո՛չ, վասն ամենափոքր շուաքի ինքնակամութեան, ապստամբութեան կ'կապեն նրանց, պատերով, թօփերի բերաններին և կ' պատառեն կտոր կտոր։

Արդ, Անգլիացւոց երկաթէ ճանապարհի շինելուցն ի՞նչ օգուտ կ'լինի.—

Պարսկաստանի, Թուքիայի և Եւրոպիոյ համար։

Միջազգային յարաբերութեանց համար։

Տիեզերական վաճառականութեան համար։

Մարդասիրութեան համար 'ի դէմ Հնդկացւոց։

Անգլիացիք կ'շտապեն շինել իւրեանց երկաթէ ճանապարհն, որ առաջն բռնեն օտարաց մտածութեանց նոյնպիսի ճանապարհ տանել ուրիշ ընթացքով, բազմաբնակ երկիրներով դէպ'ի Փանջաբ; այն ժամանակ Հնդկական վաճառականութեան և տեղական բերքերի հոսանաց առաջն կ'բացուէին լայնարձակ դռներ ամենայն Արևմտեան եզրի վերայ Ինդոսի; այնժամանակ կ'քանդուէր Անգլիացւոց իշխանութիւնն այն տեղումն; կ' ջնջուէր նոցա կախարդական զօրութիւնն.—ո՛չ հարիւր հազարաւոր Սիպայիք, ո՛չ հարիւրաւոր միլիոն բնակիչք չ'էին չոքել քառասուն հազար Անգլիացւոց զինուորաց առաջն, ինչպէս ցոյց տուին վերջին ապստամբութեան անցքերն, և այն մի բուռն Բրիտանացիք անզօր կ'լինէին վաճառականութեան քարվանների ճանապարհներն կապել։

Զգուշն Անգլիացւոց իւրեանց երկաթի ճանապարհն շինելոյ համար և նոցա կասկածանքն, որ Հնդկաստանումն չ'երևան այլ ազգերի առևտրական նոխանձաւորութիւնք, լաւ հասկանալի են; բայց նրանց ձեռին չ'է փախչել անփախուստէն.—չ'են կարող նոքա կուրիլ բնական օրինաց դէմն, նշանակման դէմն աշխարհագրութեան, որ ցուցանումէ ամենակարճ և ամենայարմար ճանապարհն 'ի մէջ կենդրոնաց Եւրոպիոյ և Ասիայի և նոցա ձկտողութեանց ուղիղ յարակցութեան համար։ Անգլիացիքն

շինեցին Թուրքիայի միջոցին Անգլիատանի հեռագրական շաւիղն,—լոյս եկաւ նորա դէմն աւելի ձեռնատու շաւիղ Անդրկովկասի և Պարսկաստանի մէջոցին։ Անգլիատանի երկաթուղին անցեալ պիտի անցանել Անդրկովկասի և Թէհրանի վերայ, ուղղակի ընթանալով դէպ յ'Արևելս, փոխանակ երկար շրջանքի Իւսիսոյ կողմոցն։ Եթէ մի ժամանակ օդապարիկներ բանեն, նոքա էլ պարտին թռչել ըստ այս ընթացքին, որն 'ի հարկէ հեռու է Անգլիացոց մտքերիցն և հաշիւներիցն։

Աստուած հիմն այս Անգլական երկաթուղոյն դրած է արդէն։ Ցեղդմարշալ Իշլան Բարեատինսկոյ լուսաւոր միտքն, որ յայտնեցաւ դրէ թէ Շամիլի բռնելոյ և Կովկասի խաղաղացնելոյ իսկ լոպէումն, էր—գործ ածել ազատ մնացած վանթսուն հազար զօրքն երկաթուղոյ շինութեան վերայ Սև և Կասպից ծովերի մէջն, որ նա կարծէր աւարտել չորս տարումն։ Պարադայքներն ուշացրին այն մտքի կատարումն, բայց այնու ամենայնիւ նա կատարվումէ, թէպէտ յամրութեամբ։ Արկաւոր էր առնել տեղական հետաքննութիւնս և սահմանել ընթացս ճանապարհին ըստ բազմատեսակ կշռադատութեանց—սարերի, գետերի, երկրի յարմարութեան, դեռնի արդեանց, թշոյ տեղական բնակչացն, կողմնական առևտուրի ուղղոց, և զօրավարութեան։ Այս ամենհարկաւոր կշռադատութեանց վերայ կպան և խոստրեցուցին աստուծոյ։ — Նաւագնացառուն Արդվեցն մինչ'ի Սամուխ; վերճումն վան շինութեան նաւահանգստի Սև ծովի վերայ; ընդբեչի համարել նեղ երկնեն ճանապարհն և..... ծանեն կովկասեան սրբերի— ըստ ընթացից Վլադիկավկազէն 'ի Թիֆլիս (իւղ, բալզամ, Բաղդադի ճանապարհ շինողաց սրտի համար!)

Բայց այս ամենայն ուշացնող պատճառներից յետոյ, երկաթուղին առաջանումէ Փոթիցն, նա շուտ կ'մտնի Թիֆլիս և երկար չ'ի քաշել որ հասնի 'ի Բաքու։

Անուանքս Թիֆլիս, Բաքու արտասանումն Անդրկովկասումն և Ռուսաստանումն առանց տալոյ առանձին նշանակութիւն աշխարհագրական դրութեան նոցա; բայց աշխարհացուցի հայեցուածն երևեցնումէ, որ Թիֆլիսն 200 վերստով և տեղին միաւորութեան Փոթիոյ և Բոռտովի երկաթուղոցն, Աբշերոն թերակղզոյ դէմն, 800 վերստով առաջ են ընկած ընդ Արևելս քան զ'Բաղդադն, և երկա-

թուղին Աբշերոնիցն 'ի Փիշաւար— 'ի վերայ Ինդոսի կ'լինի մօտ 800 վերստ կարճ, քան զճանապարհն Բաղդադիցն 'ի Շ֊քարփուր; ընդ նմին և խնդիրն ո՞չ թէ չ'է վճռած այլ և չ'է դրած:—ե՞րբ և ի՞նչպէս այս երկաթի ճանապարհն Կօնստանտինօպոլիցն հասնելոյ է մինչ 'ի Բաղդադ և ի՞նչպէս կարողէ նա անցանել 'ի Պարսկաստան:

Մ'ին խնդիր միայն դրած և վճռած են իսկ ինքեանք Անգլիացիք—օրինաւոր ճանաչողք գործոյն—որ վաճառականութիւնն Եւրոպիոյ ընդ Հնդկաստանի և ընդ հեռի Արևելիցն շահաւէտ է կատարել անընդհատ յաքարուղի երկաթի ճանապարհով, զերծանելով միջնորդութենից ծովային տեղափոխութեանն ապրանաց:

Այսպիսի վճռահատութիւնն խնդրոյ վասն անյարմար ծովային տեղափոխութեան ապրանաց Պարսից խորշումն մին ճանապարհի վերայ, և Կասպից ծովումն միւսի վերայ, երևի անվիճելի զանազանութիւնն Հարաւային և Հիւսիսային ճանապարհաց մէջն.—

Հարաւային Կօնստանտինօպոլ — Բաղդադի երկաթի ճանապարհն Անգլիացոց, դեռ ևս նոցա երևակայութեան մէջն է; իսկ գործով

Ռուսաց Հիւսիսային և Փոքր—Թիֆլիսի երկաթուղիքն շուտ կ'միաւորին Բաքուի առաջևն, որ է միջօրէական գծի վերայ; Շաթ-էլ-Արաբ գետաբերանի 'ի խորշն Պարսից և երկուսն էլ միաչափ հեռաւորութիւն ունին Ինդոսի ափներից; ապա Ռուսաց ճանապարհն կ'շարունակի իւր ընթացքն ընդ բազմամարդ, առատաբեր և բարե օդ տեղերով 'ի Փիշաւար; այլ Անգլիացոց ճանապարհն պիտի գնայ ընդ անբնակ տեղեր, անպտուղ անապատների միջով և արևադարձի շողերի տակն—'ի Շ֊քարփուր:

Այսպէս պատմելով, թերևս ո՞չ ամենայնն, որինչ վերաբերի անօգտութեանց շինութեան և յատկութեան Կօնստանտինօպոլ—Բաղդադ—Հնդկաստանի երկաթուղւոյն, և թողնելով նորա յաջողութիւնն 'ի վերա հոգացողութեան, 'ի վերայ դրամոց և 'ի վերայ համարձակութեան Անգլիացւոց, պիտոյ է դարձնել արժանաւոր մտադրութիւն Փոքր — Բաքուայ երկաթուղւոյ վերայ:

Դշխան Բարեատինսկոյ միտքն, այս ճանապարհն շինելոյ մասին, 'ի հարկէ չ'էր դրել նորա վերջին սահմանն Կասպից ծովի Արևմտեան ափն; երկարատեսութիւն նորա նշմարէր հեռացոյց առևտրական ճանապարհաց 'ի

Պարսկաստան և 'ի հարուստ երկիրներն ընդ Հիւսիսային և Հարաւային կողքերն Հնդ-քուհ—Գիմալայի, մինչ 'ի հեռաւոր Արևելքն:

Եռ առաջիկայ միաւորութիւնն Բօսուօվ—Վլադիկավկազի և Փօթի—Թիֆլիսի երկաթի ճանապարհներին 'ի Բաքու, այն տեղեցն ծովային ճանապարհն դէպ 'ի Հարաւային և Արևելեան ափներն Կասպից ծովու, յանդիման 'կ առնեն վաճառականութեան, բաց'ի պատահական վտանգներից նաւակոծութեանց, նաև անհարմար ծովային տեղափոխութիւնքն ապրանաց, յորմէ ջանան փախչել այժմ յ'Եւրոպայ մինչ ց'այն աստիճան, որ Լամշանի նեղուցումն կամենումն ծովի տակն կամարանցք շինել, որ Ենգլեայն միացնեն Ֆրանսայի հետ երկաթի ճանապարհաւ; ապա պիտոյ է մտածել վասն հնարից շարունակելոյ երկաթի ճանապարհին Բաքուից 'ի Պարսկաստան, որպէս ինքն Պարսկաստանն ցանկանումէ վաղուց:

Մարդիք գիտութեան, սեպհականք քնութեանց տեղագրութեան և գծագրութեան երկաթուղւոյ, ունին միայն կարողութիւն գնել տեղերն և ցոյց տալ յաջողակ կետն շրջելոյ և ուղղելոյ ճանապարհին դէպ'ի Ղազվին

և Թէհրան; բայց հասարակ այցելուն այն տեղերի կարէ ասել կանխաւ.—

Որ Բաքուից շրջումն ճանապարհին ծովի ափնովն և Սալեանովն կ' հանդիպի անյաղթելի դժուարութանց Գիլանու ճահիճաց մէջն:

Որ բարձրանալն միայնակ ձորով և գետահոսանոք Սֆիդ — Ռուդի (Սիզել- Օզանի) առ Ղազվինն, որ է ծովեցն 4000 ոտնաչափ բարձրութեան վերայ, ընդ կարճ միջոցով 120 վերստի, լինելոց է դժուար ելանելի:

Որ տեղագրական յարմարութիւնք դաշտավայրաց Նլեսավէտօպոլի և Ղարաբաղի, հաստատութիւնն ափանց հանդիպեալ գետերի; այնքան և երկրախօսական անհարմարութիւնք հրավայր և շարժական երկրին Շամախոյ, կ'պահանջեն անշուշտ, զի Թիֆլիս—Բաքուայ երկաթի ճանապարհն տանի Գ.ուռ գետոյ աջ կողմովն առ Ղ.ավաթ,—ապա անկարելի է թողուլ անփոյթ մերձաւորութիւնն յարմար կէտերի, վասն շրջելոյ այս ճանապարհի մին ճիւղն դէպ'ի Պարսկաստան, Աշլանդուզի վերայ կամ նրանից բարձր, և այն տեղեցն գնալով ընդ էջքն սարերի առ 'ի Մուղանու անապատն, շատ անդգալի բարձրանալով, անցանել

Արդեբիլի մոտն առ վերին մասն Պիզել—Օզանի և Խալխալի միջովն առ Ղազվին և Թէհրան։

Պօվկասեան Բաժինի մէջն Ռուսաց Տէքնիկական ժողովոյն լսեցին նորա քանի մի անդամների մոքերն, ըստ խնդրոյ ուղղութեան Բօստով—Բաքուայ երկաթէ ճանապարհին 'ի մայրաքաղաքն Պարսկաստանի; բայց այս խնդիրն կարելի է վճռել միայն այն ժամանակ, երբ նա կ'յանձնուի պարապմանց, և պարտաւորութեանց առանձին Պօմիսսիայի, կազմուածի 'ի սեպհականաց, վասն կատարելոյ ճիշտ հետազօտութիւնս տեղերի վերայ և կտրական որոշելոյ ճանապարհի կէտերն մինչև ց' Ղազվին; իսկ շարունակումն նորա մինչև 'ի Թէհրան և յայնկոյս ընդ Արևելս, կ' պատկանի Պարսից կառավարութեան խորին դատողութեանն և կշռութեան ամենայն շահուց, 'ի կողմանէ ներսին տնտեսական բարեկարգութեան իւրոյ, և 'ի կողմանէ հաշուոց արտաքին աշխարհավարութեան իւրոյ առ ազգս, որոց հետն Պարսկաստանն պիտի մտնել 'ի մօտիկ հպատրութիւն, որ վերջապէս կարողանայ իւր տեղն բռնել 'ի մէջ գործոցն առ և տուրին Արևելեան և Արևմտեան բերքերով—'ի մէջ համաշխարհական վաճառականութեան։

Թէհրանումն կարծիքներն և հայեացքներն կ'դառնան երկու գրէթէ ընդդիմադիր կողմերի վերայ; ոմանք կ'նայեն արաւային սահմանին մեծ աղի անապատին—'ի Ղում, Քաշան, Իսպահան, Շիրազ, Քէրման,—կենդանի յիշատակարաններն փառաւոր անցելոյն մեծին Պարսկաստանի, որ այժմ էս են գլխաւոր կենդրոններ բնակչաց և արհեստից։ Բայց բնութիւնն այս, առաջադոյն ծաղկեալ գաւառաց, անդթութեամբ սպառեալ է. — չ' կան անտառներ; բոյսք առ հասարակ քչանան օր ըստ օրէ; ջրերն երկրի երեսին և ներքևն, հետզհետէ ցամաքումեն; երևումեն ամեն տեղ հազարաւոր թողեալ շէնքերի աւերակներ; կանաչեղենն տնանվումէ միայն գիւղերի և քաղաքների մօտերումն, ջրած տափերում; պարտեզներումն, որք պատրաստեն ապրուստն բնակչաց և այգիքներումն, որք տալիս են փայտ շինութեան և այրելոյ և անումն մրգեր; բայց ամենայնն ստացվումէ առատահոս քրտնքիցն երկրագործի, որոյ աշխատաւորութիւնն չ' ունի ոչ մի տեղ, աներկբայ ոչ մի տեղ, իւրեան նմանն, վասն յաղթելոյ նորա շրջապատող դժուարութեանցն; այս տեղերի բնակիչքն բերումեն Իւրեանց ջուրն հարիւրաւոր վերստով

հեռի տեղերից գետնի տակի առուներով; բարձրացնումեն անբեր տափերի մէջն, հում աղիւսից, մեծամեծ աշտարակներ վայրենի աղաւնեաց համար, որ նրանցից ստանան պարարտացուցիչ աղն; անդադար և ուրախ սրտով աշխատումեն կիզող արեգական տակն,—նոքա աշխատումեն իւրեանց համար, հաղիւ վարձով, սիրահարուածեն իւրեանց ծանրակիր մշակութեան:

Այսպիսի երկիրներ, այսպիսի բնակիչներով 'ի հարկէ արժանի են, որ ըստ ցանկութեան թէհրանի պաշտպաններին, դնվին բարեկարգութեան մէջն, ընծայելով նոցա ձեռնտութիւն երկրագործութեան համար, բայց երկաթուղոյ տեղաշարշ մեքենայն ոչ թէ չ'է կարող տալ, այլ և ս կ'պահանջէ իւր համար վառելի փայտ և ջուր, որ այն տեղերումն չ' կան: Յետ այսորիկ ինչ կարողէ լինիլ վերջին նպատակն երկաթուղոյն 'ի Խպահան.—

Շարունակելն նորա մինչ'ի Ռէնդեր—Բուշիրն առ խորշն Պարսից.

Կամ մինչ'ի Վէրմա՞ն առ Ռէլուջիստան.

Աշխատել միոյ կամ միւսի ուղղութեան վերայ վասն կատարելոյ Անգլիացոց դիտաւորութեանց, որ նրանց իշխանութիւնն ծովի վերայ և նրանց տիրողական ազդեցութիւն խառ-

նակեալ Ռէլուջիստանի վերայ, ղեկի Պարսկաստանն, միանգամ միմիանց յաւիտեան, յոյսից ուղղակի և անկախ վաճառական մօտաւորութեանն Արևելից հետ և աղետաբար արկանէ այս Տէրութիւնն 'ի յաւիտենական ոչնչութիւն—տնտեսական և աշխարհավարական:

Իսկ ուրիշ կարծիքներն և հայացքներն թէհրանումն կ'շրջուին առ Հիսպային—Արևելեան կողմն նոյն աղի անապատի,—'ի Դամղան, Մաշադ, 'ի Հերաթ, Վրաբուլ և Փիշաւար,—առ երկիրներն, որք չի են ամենայն պարգևներով բնութեան, գերապանծ օդով, աշխատասէր բնակչօք և յարմարութեամբք երկաթուղի շինելոյ համար:

Խորասանն Արևմտեան—պատկանի Պարսկաստանի:

Խորասանն Արևելեան ունէր միշտ բարեկամութիւն առ Պարսկաստան և Հերաթն, առանց նենգութեան Անգլիացոց կ'միանար Պարսից թագաւորութեան հետ դեռ և ս 1838 թուին:

Աֆղանիստանն առնումէր և առնումէ փոքն Անգլիացոց, բայց նրանց երբէք չ'էր սիրում: Անգլիացոց կոտորումն Վրաբուլի մէջն, որ 'ի զուր դնէին վատաբախտ Աչոկեվիչի վերայ,

վան ժամանակաւոր գտնուելոյ նորա այն տեղ, և կարծիքական ազդեցութեանն նորա Դ՝ օստ—Մահմադ—Խանի վերայ, ո՛չ այլ ինչ էր, թէ ճայթումն ժողովրդեան ատելութեան;— և այժմ այս երկիրն, պատառեալ Դ՝ օստ—Մահմադ—Խանի ժառանգներով, որք սորա համար ստանումեն յ՝Անգլիացոց նպաստաւորք, կարելի է խմումէ վերջին դառն բաժակն իւր ատելութեան առ Հնդկաստանի իշխողներն։

Ըստ առաջին նշանաւորութեան թէհրանայ ամենայն երկիրներն մինչև ց՝Փանջաբ կ՝ յայտնեն իւրեանց ջերմեռանդ համաձայնութիւնն, կարելի ևս իւրեանց գործակցութիւնն վառն տանելոյ երկաթի ճանապարհին ՝ի Փիշաւար և այն ժամանակ վաճառական հոսանք Եւրոպիոյ և Արևելից ազգերի մէջն, չ՝են կարող արգելուլ այն կեղծաւոր զօրութեամբ, որն խափանումէին նրան մինչև այս օր։

Այսու եղանակաւ Հնդկայ—Եւրոպեական երկաթի ճանապարհն ներկայնումէ երկու ընթացքով, որք իւրեանց ոստալից սկզբունքն առնումեն Իսպային և Սարաւային երկիրներումն Եւրոպիոյ, անցանելով առանձնակի Ռուսսիայի հողով, միաւորին Պարսկաստանի

ոահմանի վերայ, վասն շարունակելոյ իւրեանց ընթացքն դէպ ՝ի հեռագոյն Արևելքն, և անդրադարձ շարժիլ դէպ յ՝ Արևմուտս։

Դ՝ օստով—Դ՝ աքուի ճանապարհն կ՝ ներկայացնի անընդհատ երկաթուղի գիծն Ատլանտիկիցն մինչև ց՝Ինդոսն, ազատ ամենայն միջնորդութենէ ջրային ճանապարհաց և նոցա բազմահոգ տեղափոխութէնէն ապրանաց; բայց այս ճանապարհն ունին վայելել միայն Հիւսիսային երկիրներն Եւրոպիոյ, որք կարողեն հաշուել օգտակար Վարշավի վերայ յարակցութիւնն Դ՝ օստովի հետն և անդրադարձ; իսկ միջին և հարաւային Եւրոպայն կ՝ ձկտի առ Օդէսսայ, Դունայ և Կոնստանդինոպոլ։

Այս տեղ Փոթի—Դ՝ աքուայ ճանապարհն ներկայացնումէ բաւականութիւն տուող պիտոյիցն, բայց ունի անյարմարութիւնք միջնորդութեան Սև ծովու ջրային ճանապարհի և նորա հետն կապեալ տեղափոխութեանց։

Կոնստադինոպոլն միշտ ցանկանումէ վայելել ՝ի բնութենէ նրան տուած իրաւունքներն —լինիլ դլխաւոր օղն շղթային համաշխարհական վաճառականութեան; նա այժմ պատրաստէ կամուրջ ձգել Բոսֆորի վերայ ՝ի Սկիւդար; երկաթէ ճանապարհն մինչև ց՝Իսմիդ

արդէն չենաձէ, նա գնում է յ՝ Էրզրում—Հէ-
հարն և բախտաւոր աղդեցութիւնն ընդ առող-
ջամիտ խորհրդածութեան ցոյց կ՝ տան, որ
այն ճանապարհն պիտի չարունակվի՝ ի վերայ
սքանչելի տեղերին, ՝ի մէջ բազմաթիւ, աշխա-
տասէր և վաճառական բնակչաց Իսպիսային
գաւառ փոքր Ասիոյ—Անկիւրոյ, Ամասիոյ,
Տրապիզոնի առ Բաթում, հեռաւորութեամբ
իբր 700 վերստ, միանալոյ համար Փոթի—
Բաքուայ ճանապարհի հետն, և վասն հասց-
նելոյ Օնստանտինօպոլին կրկնապատիկ օգու-
տներն—վայելել առատ բերքերն այս հարուստ
մասին Թուրքիայի և ընդ նմին էս լինիլ ճշ-
մարիտ և անկախ պահեստ ապրանաց Հնդկա
—Եւրոպական երկաթի ճանապարհին:

Առաջին պաշտոնական տեղեկութիւն-
քն Ռուսաց ճարտարապետաց վասն քաշելոյ
երկաթուղւոյ գծին Պարսկաստանում և Թուր-
քիայում կ՝ տան ուրախութիւն բոլոր տեղական
բնակչացն—տեսնել իւրեանց երկիրներին, շար-
ժումն մեծամեծ քարվանաց, որք մին ժամումն
թռչումն երկաթի ճիպոտների վերայ ընդ
այնքան տարածութիւն, որ հասարակ քարվան-
ներն անցնումէին միքանի օրում: Առաջին
պաշտօնական խօսացութիւնքն Ռուսաց դես-

պանաց թէհրանում և Օնստանտինօպոլում
վասն հիմանց շինութեան միջազգային Հնդ-
կա—Եւրոպական երկաթուղւոյն, կ՝ տան հր-
ճուալից շարժումն ամէն վաճառականաց ժո-
ղովոց, ամէն բանկիրների հաշուատանց ցամա-
քային Եւրոպիոյ, որ մասնակից լինին բազ-
մացանկալի և բազմաշահ գործումն:

Կատարեալ ճշմարիտ ասացին տեղեկու-
թիւնքն, տուեալք հանգուցեալ Յոդրիկ Մուր-
չիսօնէն Լօնդօնի աշխարհագրական ժողովոյն,
որ՝ ի մէջ Ռուսաց, որք եկեալն Կենդրոնական
Ասիումն, և Անգլիացոց Հնդկաստանումն,
անկարելիէ ոչինչ ընդհարումն,—նոցա մէջն
կանգնաձեն անանցանելի Հիմալայի սարերն;
ընդ նմին, նա ասէր էս, որ ամենայն մօտա-
ւորութիւն Ասիումն Անգլեոյ և Ռուսսիոյ մէջ
ձեռնատու կ՝ լինին նոցա երկդիմի առևտուրա-
կան շահաւէտութեան, այն երկիրումն; բայց
նա ասումէր այս ամուր պայմանաւ, որ Ռուս-
սիայն զբօսնու իւր համար ինչ պէս կամենայ
Թաթարստանումն, միայն ոչ մի կողմից չ՝
նայի Հնդկաստանի վաճառական գործոց վերայ:

Հանրի Բավլինսոնն, հաստատելով պար-
ոն Մուրչիսօնի խօսքերն, ասէ աւելի պար-
զապէս իւր առաջադրութեան մէջն—անցու-

ցանել երկաթէ ճանապարհն 'ի Հնդկաստան որքան կարելիէ հեռագոյն Ռուսաց երկիրներից, ընդ առաւել հարաւային սահմանն Ասիոյ։

Սակայն մի քանի ամիս առաջ Կալկուտթայի լրագիրն Calcutta Review հրատարակեց յօդուածներ, որք միամտութեամբ 'ի յայտ բերին հասարակական կարծիքներն Հնդկաստանում, մինչև այն տեղ բնակուած Անգլեացոց.— „Աշտական յարակցութիւնքն „վաճառականութեան Ռուսիայի և Հնդ„կաստանի մէջն կարող են լինել 'ի բարձր „աստիճանի օգտակար երկու կողմերին, և „շահաւէտութիւնն այս յարակցութեանց կ'լի„նի այնքան աւելի մեծ, որքան լինի ուղ„ղակի։"

Ահա՛ ճշմարիտ ճշմարտութիւն, անկեալ նաև շրթունքներից Անգլեացւոյ, երբ նա չէր կարող այլ կերպ խօսիլ, լինելով միջնորդ Հնդկաստանի բնակչաց զգացողութեանց և շահաւէտութեանց, որք բաժանեն նոցա հետ ամենայն ազգեր, բաց յ' Անգլեացւոց։

Երեմիայ Աբծրունի.

Дозволено цензурою. Тифлисъ 31 Іюля 1872 года.

ՔԱՐՏԷԶ
ԱՌ ԽՆԴԻՐՆ ԵՐԿԱԹԵ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ
դէպ՝ի
ՀՆԴԿԱՍՏԱՆ
Չափ՝
100 Վերստ մէջ մէկ Անգլերէն
1/7980 000
Օդեսսա
Բաթում
Աստրախան
ՌՈՒՍԻԱ
Սեվաստոպոլ
ՍԵՒ ԾՈՎ
Մաքոյ
Եկատերինոդար
Թէրէք
Գէորգիևսկ
Էլիզաւետպոլ
Կուտայիս
Վլադիկավկազ
Փոթի
Բաթում
Թիֆլիս
Կոստանդինոպոլ
Մարմարա
Խամիդ
Սամսոն
Անգորա
Ամասիա
Տրապիզոն
Էրզրում
Էլիսավետպոլ
Բաքու
Երևան
Չաղատ
Կարսանոփոլակ
ԿԱՍՊԻՑ
ԾՈՎ
Էրզինջան
ԹՈՒՐՔԻԱ
ՀԱՅԱՍՏԱՆ
Զուլֆա
Վան
Աղուանդուզ
Գիարբեքիր
Ուրմիա
Թաւրիզ
Արդեբիլ
Խալխալ
Ենզալի
Աստարաբադ
Մէշէդ
Զանջան
ԿԱՍՊԻՑ
Գաւշան
Թեհրան
Հերատ
Քաբուլ
Փիշաւար
ԱՖՂԱՆԻՍՏԱՆ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
Կում
Կաշան
Իսպահան
Բաղդատ
ԿՈՒՏՋԻՍՏԱՆ
Տիգրիս
Եփրատ
Բասրա
Գէրման
Շիրազ
Բէնդէր-Բաշիր
ՊԱՐՍԻՑ
ԽՈՐԾ
Եքարիմար
ԲԷԼՈՒՋԻՍՏԱՆ
ՀՆԴԿԱՍՏԱՆ
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ
ԿԱՐՄԻՐ
ԾՈՎ
ՕՄԱՆՈՒ ԾՈՎ

0003949

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0003949